Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Արարատի մարզի Խարբերդի մասնագիտացված մանկատան բարեկարգման» ծրագրի եզրափակիչ արարողություն

2023 թ.ի Նոյեմբերի 1-ին Նոր Խարբերդ գյուղում տեղի ունեցավ ««Արարատի մարզի Խարբերդի մասնագիտացված մանկատան բարեկարգման» ծրագրի մինչև 99,739 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորին, Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար պարոն Սամվել Մուրադյանը, տկն. «ՔԵՉ ՀԱՄԱՐ» ՀԿ նախագահ Գայանե Բալասանյանը, Խարբերդի մասնագիտացված մանկատան տնօրեն պարոն Հարություն Բալասանյանը ծրագրի անձնակազմի և շահառուների հետ:

Ծրագիրն իրականացվել է ավելի լավ կենսամիջավայր ապահովելու և երկրում ծնողազուրկ երեխաների կյանքի որակի բարելավմանը նպաստելու համար՝ մանկատանը մահճակալներ և կահույք տրամադրելով: Արդյունքում մոտ 240 երեխա կօգտվի ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Երգ ծնողազուրկ երեխաների հետ

Տրամադրված մահճակալ

2003թ. GGP-ի միջոցով տրամադրված կահույք